ՍՄԿԿ XXV ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Լ. Ե. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՍՄԿԿ XXV համագումարը սովետական հասարակության տնտեսական ու սոցիալ-քաղաքական զարգացման գիտական հեռանկարների մշակման հետ մեկտեղ առաջ քաշեց նաև աշխատավորների կոմունիստական դաստիարակության գլխավոր խնդիրներն ու ուղղությունները։ ՍՄԿԿ XXIV համագումարից հետո ընկած ժամանակաշրջանը հագեցված էր սոցիալ-տնտեսական ու գաղափարական-քաղաքական մեծ նշանակություն ունեցող իրադարձություններով։ Կենսագործելով համագումարի որոշումները, կուսակցությունն ապահովեց կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման, հասարակական հարաբերությունների կատարելագործման ու սովետական մարդկանց կոմունիստական դաստիարակության գործում նոր, ավելի բարձր բնագծերի նվաճումը։

Երկրում կատարված որակական տեղաշարժերն, անշուշտ, դրականապես ազդեցին գաղափարական, դաստիարակչական աշխատանքի բնույթի ու բովանդակության հարստացման, տարբեր մեթոդների ու ձևերի ներդաշնակման վրա։ Գաղափարական-դաստիարակչական աշխատանքի հիմնական ուղղությունների ու խնդիրների մասին խոսելիս անհրաժեշտ է ելնել համագումարի մշակած սոցիալ-տնտեսական, գաղափարական-քաղաքական, ներքին ու միջազգային զարգացման պրոբլեմների ամբողջությունից, հաշվի առնել ինչպես դաստիարակության խնդիրները, այնպես էլ նրանց կենսագործման ձևերի ու մեթոդների բազմազանությունը, անցյալի դրական ժառանգությունը։ Բնորոշն այն է, որ զարգացած սոցիալիստական հասարակության ներկա էտապում պահանջվում է լուծել կոմունիստական դաստիարակության որակական նոր խնդիրներ։ Չէ՞ որ մեր կյանքում ամեն օր շոշափելի փոփոխություններ են կատարվում։ Կյանք են մտնում նոր սերունդներ։ Արդի գիտատեխնիկական հեղափոխությունը սոցիալ-տնտեսական նոր հետևանքների է հանգեցնում, աճում է ժողովրդի գիտակցության ու իրազեկության աստիճանը։ Ուստի նորովի են դրվելու նաև մասսաների դաստիարակության շատ հարցեր ու խնդիրներ։

«Մեր կարգերի ուժը մասսաների գիտակցականությունն է,—ՍՄԿԿ XXV համագումարին տված Կենտկոմի հաշվետու զեկուցման մեջ ընդգծեց Լ. Ի. Բրեժնևը,—և կուսակցությունը իր մշտական հոգսն է համարում կոմունիստական գիտակցականության, կոմունիզմ կառուցելու պատրաստակամության, կամքի ու հմտության դաստիարակումը»։ Զեկուցման մեջ նորից շեշտվեց, որ «Կոմունիստական դաստիարակության գործը, ինչպես իր ամբողջ հեղափոխական վերափոխիչ գործունեությունը ՍՄԿԿ-ն կառուցում է մարքս-լենին-

յան տեսության ամուր հիմքի վրա»[1], տեսություն, որի ստեղծագործական զարգացման ու կիրառման շնորհիվ ձևավորվում և ամրապնդվում է աշխատավորական լայն զանգվածների կոմունիստական աշխարհայացքը։

Կուսակցության տեսական ու պրակտիկ համակողմանի գործունեությունը ամուր հիմք է սովետական մարդկանց գիտական, մարքսիստական-լենինյան աշխարհայացքի ձևավորման համար և պայմաններ է ստեղծում բարձրացնելու գաղափարա-դաստիարակչական աշխատանքի որակն ու արդյունավետությունը։

Սովետական մարդկանց կոմունիստական աշխարհայացքի, գաղափարական համոզվածության ակտիվ ձևավորման անհրաժեշտ պայմաններից մեկը հասարակության հետագա զարգացման, առաջադրված խնդիրների մասշտաբայնության և դրանց լուծման ուղիների ճիշտ պատկերացման ստեղծումն է։ Իրա համար անհրաժեշտ է աշխատավորության շրջաններում գիտական խորությամբ բացահայտել սոցիալիզմի էությունը՝ նրա ողջ համակողմանիության մեջ, սոցիալիզմի, նրա զարգացման էտապների մասին տալ լրիվ ու ճիշտ գաղափար։

Այս առումով դաստիարակչական աշխատանքին խանգարում են երկու ծայրահեղ մոտեցումներ։ Մի դեպքում սոցիալիզմի էությունը չի բացահայտվում իր ամբողջության և դիալեկտիկական պրոցեսի մեջ, որոշ համաստով աչքաթող են արվում մեր վիթխարի նվաճումները և շեշտը դրվում է լոկ թերությունների մերկապարանոց ուռճացման վրա, իսկ մյուս կողմից՝ սվաղվում են մեր առաջընթացին խանգարող թերություններն ու ստվերոտ կողմերը, անտեսվում դրանց վերացման համար աշխատավորական լայն զանգվածների ջանքերը մոբիլիզացնելու նշանակությունն ու անհրաժեշտությունը։ Մասսայական լսարանը, որպես կանոն, չի հանդուրժում կոմունիստական շինարարության անցյալ էտապի ու ներկա խնդիրների մեկնաբանման ժամանակ թեթևակի, միակողմանի մոտեցումը և ոչ էլ դժվարությունների ու թերությունների չափազանցումն ու շեշտված ընդգծումը։

Կուսակցության XXV համագումարը նշեց, որ կոմունիստական շինարարության խնդիրների հաջող իրականացման համար կարևոր նշանակություն ունեն առավել գործնական ու արդյունավետ ուղիների ու մեթոդների ակտիվ ու ստեղծագործական որոնումը, մարդկանց դաստիարակումը համարձակության, ստեղծագործական խանդավառության ու համաժողովրդական նախաձեռնության ոգով։ Այդ առումով համագումարը քննադատեց ու պահանջեց հաղթահարել մարքս-լենինյան տեսության պրոպագանդման գործում կրանքից կտրվածության ու սուր հարցերից խուսափելու միտումը, որը դասակարգային սկզբունքայնության հետ անհամատեղելի է։ Պրոպագանդիստական աշխատանքում դրական համարվեց այն, որ գնալով տիրապետող է դառնում պրոբլեմների բացահայտման վերլուծողական մոտեցումը, դրանց լուծման ուղիների ու միջոցների խորը, գիտական հիմնավորումը։ Դա, բնականաբար, բարձրացնում է պրոպագանդայի, ամբողջ գաղափարական-դաստիարակչական աշխատանքի գործնականությունը և արդյունավետությունը։

Սոցիալիստական շինարարության տեսական ու պրակտիկ պրոբլեմների, ձեռք բերած նվաճումների լայն ու համակողմանի լուսաբանումը և սոցիա-

[1] «Սովետական Հայաստան», 25. II. 1976։

լիզմի առավելությունների ու իսկական մարդասիրական էության բացահայտումը մեծ չափով նպաստում է աշխատավորների հայրենասիրական դաստիարակությանը, նրանց մոտ խորացնում է օրինական հպարտության և իր հայրենիքի հերոսական անցյալի նկատմամբ հարգանքի զգացումը։ Այդ աշխատանքը վերջին տարիների ընթացքում հետագա զարգացում ստացավ նշանավոր տարելիցների տոնակատարության կապակցությամբ։ Հանրահայտ է, թե ինչ վիթխարի դաստիարակչական դեր խաղացին ՍՍՀՄ կազմավորման 50-ամյակի և Հայրենական մեծ պատերազմում ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի 30-ամյակի փառատոները։

Սովետական մարդկանց կոմունիստական աշխարհայացքի ձևավորումը բարձր քաղաքական գիտակցականության, խորը գաղափարական համոզվածության դաստիարակման մեջ է։ Դա նշանակում է անհատի դասակարգային դիրքորոշման հստակություն, նրա ունակությունը՝ ոչ միայն տիրապետելու գիտելիքների, գաղափարների մի որոշակի գումարի, այլև դառնալու դրանց ակտիվ կենսագործողը, բանվոր դասակարգի, բոլոր աշխատավորների գործի համար պայքարող ակտիվ քաղաքական մարտիկը։

Սովետական մարդկանց քաղաքական համոզմունքները ձևավորվում են մեր ամբողջ ապրելակերպի, նյութական ու հոգևոր գործոնների, հասարակական հարաբերությունների բնույթի, դաստիարակության ու կրթության ամբողջ համակարգի ազդեցության մթնոլորտում։ Հիմնականը աշխատավորական լայն խավերի, հատկապես երիտասարդության մարքս-լենինյան կրթության, հասարակության անդամների մեջ կոմունիստական բարոյականության արմատավորումն է, մարդկանց գիտակցության ու վարքագծի մեջ անցյալի մնացուկների հաղթահարումը։ ՍՄԿԿ XXV համագումարի որոշումներում նորից ընդգծվում է, որ աշխատավորների մարքս-լենինյան աշխարհայացքի, բարձր գաղափարական-քաղաքական հատկությունների, կոմունիստական բարոյականության նորմերի ձևավորումը այսուհետև ևս մնում է կուսակցական կազմակերպությունների գաղափարական աշխատանքի կենտրոնական խնդիրը։

Մեր օրերում աշխատավորների կոմունիստական դաստիարակության խնդիրների իրականացման կարևոր նախապայմաններից է բուրժուական գաղափարախոսության, հակակոմունիզմի դեմ վճռական պայքարի կազմակերպումը։ «Երկու աշխարհայացքների պայքարում չի կարող տեղ լինել շեղոքության ու կոմպրոմիսների համար,— ասված է Լ. Ի. Բրեժնևի զեկուցման մեջ։ — Այստեղ հարկավոր է քաղաքական բարձր զգոնություն, ակտիվ, օպերատիվ և համոզիչ պրոպագանդիստական աշխատանք, հարկավոր է ժամանակին հակահարված հասցնել թշնամական գաղափարական դիվերսիաներին»[2]։

Հայտնի է, որ ՍՄԿԿ XXV համագումարի մշակած խաղաղության ծրագրի իրականացման շնորհիվ միջազգային լարվածության թուլացում տեղի ունեցավ։ Սովետական Միության ու սոցիալիստական համագործակցության երկրների, աշխարհի բոլոր խաղաղասեր ու առաջադեմ ուժերի ջանքերի շնորհիվ միջազգային հարաբերություններում խորը տեղաշարժեր կատարվեցին՝ շրջադարձ է տեղի ունենում սառը պատերազմից դեպի լարվածության թուլացում։

---

2 Նույն տեղում։

Սակայն իմպերիալիզմը չի փոխել իր բնույթը։ Մարդկության առաջադիմության ընթացքը նա ձգտում է կասեցնել՝ օգտագործելով նենգ ու դավադիր մեթոդներ, մարտի մեջ նետելով ժամանակակից աշխարհի ամենահետադիմական գաղափարական զինանոցը՝ հակակոմունիզմը։ Գաղափարական պայքարի նենգ ու նրբին մեթոդներով իմպերիալիզմը ձգտում է «ապացուցել» կապիտալիստական հասարակարգի կենսահաստատությունը, ետ նվաճել իր կորցրած դիրքերը։ Հակակոմունիզմը, որպես իմպերիալիզմի գաղափարաքաղաքական գլխավոր զենք, չխորշելով ոչ մի միջոցից, նպատակ է հետապնդում աշխատավորության առաջ վարկաբեկել սոցիալիզմի տեսությունն ու պրակտիկան, նսեմացնել սոցիալիստական երկրների ձեռք բերած սոցիալ-տնտեսական վիթխարի հաջողությունները, որոնք հատկապես տպավորիչ են կապիտալիստական աշխարհի տնտեսական ճգնաժամի ու սոցիալական խորը ցնցումների ֆոնի վրա։ Իմպերիալիզմի ջատագովներն ամենուրեք ձգտում են իրենց երկրների աշխատավորական մասսաներին կապիտալիստական կարգերի նկատմամբ հավատ ներշնչել, որը խիստ կերպով խարխլվել է առանձնապես վերջին տասնամյակներին, հատկապես կապված Հարավ-Արևելյան Ասիայում ամերիկյան իմպերիալիզմի կրած խայտառակ պարտության, դեմոկրատական ու ազգային-ազատագրական շարժումների բուռն վերելքի, Պորտուգալիայում ու Հունաստանում ֆաշիզմի տապալման, Իսպանիայում իմպերիալիզմի դիրքերի խիստ թուլացման հետ։

Բուրժուական պրոպագանդան գաղափարական դիվերսիաներ է կազմակերպում Սովետական Միության ու սոցիալիստական մյուս երկրների դեմ։ Իր քայքայիչ գործունեությունը ծավալելու համար նա դիմում է ամեն տեսակի նենգությունների ու խարդախությունների, այդ նպատակների համար օգտագործելով ամեն կարգի հակասովետական տարրերի, սիոնիստների ու դավաճանների, ժամանակակից օպորտունիստների ու ռևիզիոնիստների ծառայությունները։ Բուրժուական պրոպագանդայի փորձված մեթոդն է գաղափարական դիվերսիան, փաստերի կեղծումը, սոփեստությունը, մարդկանց ազգային զգացմունքների չարաշահումը։ Սոցիալիստական երկրների, միջազգային կոմունիստական շարժման դեմ մղվող իրենց գաղափարական դիվերսիայում բուրժուական ջատագովներն առատորեն օգտվում են այսօրվա չինական ղեկավարների դավաճանական վարքագծից, այն զրպարտանքներից, որ նրանք տարածում են Սովետական Միության ու մյուս սոցիալիստական երկրների նկատմամբ։ Բուրժուազիայի գրչակների համար ուղղակի դյուտ է չինական ղեկավարների սոցիալիզմը վարկաբեկող վարքագիծը երկրի ներսում, նրանց ներքին ու արտաքին բախտախնդիր, մեծապետական-շովինիստական քաղաքականությունը։ Բուրժուական գաղափարախոսները սիստեմատիկաբար նորոգում են իրենց ներգործության ձևերն ու մեթոդները։ Օրինակ, իրենց հին հակակոմունիստական գաղափարներից շատերը այժմ նրանք հրամցնում են կյանքի այս կամ այն երևույթները «ճիշտ հասկանալու» համար սովետական մարդկանց օգնելու քողի տակ։ Իսկ դա սովետական մարդկանցից պահանջում է հասարակական կյանքի երևույթներին մոտենալու, դրանք ճիշտ գնահատելու գիտելիքներ ու հմտություն։ Բնականաբար, թշնամական գաղափարախոսության դեմ անհաշտ պայքարը, իմպերիալիզմի նկրտումների վճռական մերկացումը շարունակում են մնալ որպես աշխատավորների կոմունիստական դաստիարակության կարևոր խնդիրներ։

ՍՄԿԿ XXV համագումարը առանձնահատուկ ուշադրություն դարձրեց աշխատավորների աշխատանքային դաստիարակության հարցերին. «Մասսաների քաղաքական դաստիարակության հաջողության չափանիշը, իհարկե, կոնկրետ գործերն են,—նշվում է ՍՄԿԿ Կենտկոմի հաշվետու զեկուցման մեջ,— կոմունիստական դաղափարայնությունը գիտելիքների, համոզմունքների և պրակտիկ գործողության համաձուլվածքն է»[3]։

Կուսակցության համագումարն ընդունեց սովետական հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման լայնածավալ ծրագիր։ Համագումարի որոշումներում տրվեց սովետական էկոնոմիկայի արդի էտապի խորը, փաստարկված բնութագիրը, ձևակերպվեցին մեր երկրի ամբողջ ժողովրդական տնտեսության որակական զարգացման նոր, ավելի բարձր էտապի բնորոշ գծերն ու առանձնահատկությունները։ Օրինաչափ է, որ փոփոխություններն էկոնոմիկայում, հասարակական հարաբերությունների մեջ նոր, ավելի բարդ խնդիրներ են առաջադրում նաև գաղափարական ճակատում։ Հասունացած սոցիալ-տնտեսական պրոբլեմների լուծումը պահանջում է կատարելագործել հասարակական հարաբերությունները, ուժեղացնել գաղափարական դաստիարակության ներգործությունը։ Իր հերթին գաղափարական գործունեությունը նոր բաղխի ձևավորման պրոցեսի հզոր ազդակ է։

Այդ բարդ ու բազմակողմանի փոխադարձ կապը բխում է նաև նրանից, որ վերափոխվել են և շարունակում են փոխվել արտադրության տեխնիկատնտեսական ու սոցիալական պայմանները, քանակական ու որակական չափանիշները։ Բարդանում է արտադրական պրոցեսի բովանդակությունը, ավելի բարձր պահանջներ են առաջադրվում մարդկանց կրթության ու ուսուցման նկատմամբ, փոխվում է աշխատանքի բնույթը, նոր խնդիրներ են առաջանում մարդկանց սոցիալ-արտադրական ու հասարակական-քաղաքական ակտիվության զարգացման մեջ։ Հասկանալի է, որ սոցիալ-տնտեսական վիթխարի պլանների հաջող իրականացումը հնարավոր է բանվորների ու գյուղացիների, մտավորականության, ամբողջ սովետական ժողովրդի ստեղծագործության ու նախաձեռնության համակողմանի զարգացման միջոցով։ Կյանքի հետ պրոպագանդայի սերտ կապի մասին լենինյան սկզբունքը այստեղ օգտագործելի է իր ամբողջականության ու բազմազանության մեջ։ Ինչպես մեկ անգամ ևս ընդգծվեց համագումարում, նույնիսկ ամենաառաջավոր գաղափարախոսությունը ռեալ ուժ է դառնում միայն այն ժամանակ, երբ տիրապետելով մասսաներին, նրանց մղում է ակտիվ գործողությունների, որոշում է նրանց ամենօրյա վարքագծի նորմերը։

Արդի պայմաններում, երբ դրվում են խոշոր տնտեսական ու քաղաքական խնդիրներ, տնտեսական ու սոցիալական պրոբլեմների համալիր լուծման պահանջներ, նորովի են ձևափոխվում նաև աշխատանքային դաստիարակության շատ հարցեր։ Հանրահայտ ու սովորական ձևակերպումներում դրվում է նոր, ավելի խորը բովանդակություն։ Եվ դա օրինաչափ է. որքան իր զարգացման մեջ վեր է բարձրանում հասարակությունը, որքան խորն են վերափոխումները, այնքան ծավալուն են յուրաքանչյուր մարդուն առաջադրվող պահանջները։ Կյանքը առաջին պլան է մղում ստեղծագործող անհատի դաստիարակումը, աշխատանքում անհրաժեշտ ինքնագործունեության ու նախաձեռնության զարգացումը։

3 Նույն տեղում։

XXV համագումարը նշեց, որ գաղափարական-քաղաքական դաստիարակության կարևորագույն կողմն է աշխատանքի ու հանրային ունեցվածքի նկատմամբ կոմունիստական վերաբերմունքի դաստիարակումը, աշխատավորների ստեղծագործական ակտիվության զարգացումը։ Ընդգծվեց, որ կուսակցական ու հասարակական կազմակերպությունների մշտական ուշադրության կենտրոնում պետք է լինի աշխատավորների սոցիալիստական մրցության՝ որպես տնտեսական շինարարության մեջ աշխատավորների ակտիվության բարձրացման դործնական մեթոդի զարգացումը։

Աշխատանքի նկատմամբ կոմունիստական վերաբերմունքի դաստիարակումը, մարդկանց ստեղծագործական նախաձեռնության զարգացումը, սոցիալիստական մրցության ծավալումը և աշխատանքի առաջավոր մեթոդների արմատավորումը կուսակցության XXV համագումարը դիտեց հասարակական առաջադիմության բոլոր խնդիրների հետ սերտորեն շաղկապված։ Աշխատանքի նկատմամբ կոմունիստական վերաբերմունքի դաստիարակումը հատկապես փոխադարձ կապի մեջ է գիտատեխնիկական հեղափոխության նորագույն նվաճումներին աշխատավորական լայն զանգվածների տիրապետելու խնդիրների հետ։ Այս ամենը նոր, ավելի բարձր պահանջներ են դնում մարդու, նրա կրթական ու կուլտուրական մակարդակի, մասնագիտական վարպետության առաջ։ Խորը գիտելիքները, բարձր մասնագիտական պատրաստությունը, մարդու բարձր կուլտուրան դառնում են լայն խավերի հաջող աշխատանքի ու հասարակական-քաղաքական գործունեության անհրաժեշտ պայման։

XXV համագումարը առանձնահատուկ ուշադրություն դարձրեց աշխատավորների տնտեսագիտական կրթության հարցերին։ Կենտրոնական կոմիտեի հաշվետվության մեջ նշվեց, որ ուսուցման այդ սիստեմով արդեն անցել է ավելի քան 42 միլիոն մարդ։ Ներկայումս սովորում է 36 միլիոն մարդ։ «Այդ աշխատանքը պետք է շարունակել։ Է՛լ ավելի զարգացնելով տնտեսագիտական կրթությունը, մենք պետք է հոգանք այն մասին, որ դա առավելագույն չափով նպաստի ամենուրեք աշխատանքի կազմակերպման առաջավոր փորձի տարածմանը, գիտության ու տեխնիկայի արմատավորմանը արտադրության մեջ»[4]։

Տարբեր ծավալներով ու մակարդակներով տնտեսագիտական ուսուցումը վերաբերում է հասարակական արտադրության բոլոր մասնակիցներին։ Տեխնիկատնտեսական գիտելիքների որոշակի պաշար յուրացնելով աշխատավորները հնարավորություն են ստանում ամենօրյա փաստերի ու ռեալ իրականության օգնությամբ օրգանական կապ տեսնել երկրի, ամբողջ հասարակության շահերի և իրենց արտադրական տեղամասի, ձեռնարկության, սովխոզի կամ շինարարության գործերի վիճակի միջև։ Սովետական հասարակության առաջընթացի համար այդ կապի ըմբռնումը չափազանց կարևոր է, քանի որ կոնկրետ կոլեկտիվում է սկսվում արտադրության հիմքը, այնտեղ է ընթանում նորի հաստատման ստեղծագործական բազմակողմանի պրոցեսը, այնտեղ է արտահայտվում անհատի դերը տնտեսական բազիսի զարգացման գործում, դրսևորվում հասարակության անդամների գիտատեխնիկական ու սոցիալական ակտիվությունը։ Է՛լ ավելի է բարձրանում պահանջկոտությունը

[4] Նույն տեղում։

ղեկավար ինժեներատեխնիկական աշխատողների նկատմամբ։ Հայտնի է, օրինակ, որ գիտական գիտելիքների ծավալը յուրաքանչյուր 8—10 տարին մեկ կրկնապատկվում է։ Եվ խնդիրը ոչ միայն քանակական ցուցանիշներն են, այլ այն, որ սկզբունքորեն փոխվում են գիտատեխնիկական հեղափոխության բնույթն ու ուղղությունները, գործադրվում են արտադրության կազմակերպման բոլորովին նոր սկզբունքներ ու սխեմաներ, մինչև այժմ անհայտ տեխնոլոգիական լուծումներ, նոր առաջնային նյութեր և որպես արդյունք այս ամենի՝ նոր արտադրանքի ստացում։ Այս հարցերի գիտական ճիշտ լուծման համար արդեն բավական չեն նախկինում ձեռք բերած գիտելիքներն ու կուտակած արտադրական փորձը։ Պահանջվում է դրանց անընդհատ նորացում, ստեղծագործական փնտրումներ աշխատանքում, հեռանկարը դիտելու ու տեսնելու, տեխնիկատնտեսական ու գիտա-արտադրական տեղաշարժերին պատրաստ լինելու կարողություն։

Այս հատկությունները միայն անձնական ջանքերի արդյունք լինել չեն կարող։ Անհրաժեշտ է անհատ-կոլեկտիվ-հասարակություն ամբողջ կոմպլեքսի փոխներգործությունը։ Չէ՞ որ ուզած աստիճանի ղեկավարը ոչ թե սոսկ ինժեներ է, տեխնիկ, այլև մասսաների դաստիարակ ու կազմակերպիչ։ Ինժեներական-տեխնիկական կրթության հետ միասին նրան անհրաժեշտ է լայն հումանիտար պատրաստություն։ Սոցիալ-արտադրական հոգեբանության, մանկավարժության, արտադրական-տեխնիկական գեղագիտության ու մասնագիտական էթիկայի հիմունքներին արտադրության հրամանատարի տիրապետելը այսօր դառնում է մեր հանրային արտադրության զարգացման կարևոր նախապայմաններից մեկը։ Իսկ այս ամենը կարելի է արմատավորել հետևողական դաստիարակչական աշխատանքի միջոցով։

ՍՄԿԿ XXV համագումարում քանիցս նշվեց, որ մեր երկրի զարգացման արգի խնդիրների լուծման գործում չափազանց կարևոր է տնտեսագիտական գիտության խնդիրների և նրա նվաճումների մասսայականացումը աշխատավորական լայն զանգվածների շրջանում։ Խոսքը կուսակցության տնտեսական քաղաքականության խորը ուսումնասիրության մասին է, ժողովրդատնտեսական խնդիրների լուծման մեջ կոնկրետ կոլեկտիվի ու անձամբ յուրաքանչյուր աշխատողի դերի մասին հստակ պատկերացումների մշակումը, սոցիալիստական սեփականության պահպանման գործում անձնական պատասխանատվության բարձրացումը, անտնտեսվարության, թափթփվածության նկատմամբ անհաշտ վերաբերմունքի ստեղծումը, այսինքն՝ յուրաքանչյուր աշխատողի մոտ այնպիսի առաջադիմական ստեղծագործական հատկությունների կոմպլեքսի ձևավորումը, որոնք առավել լրիվ կերպով են արտահայտում մեր հասարակական արդի սոցիալ-տնտեսական զարգացման շահերը։

Կուսակցության համագումարի ուշադրության կենտրոնում էին աշխատավորների հասարակական-քաղաքական ակտիվության զարգացման հարցերը։ Մեր կուսակցությունը մշտապես ելնում է լենինյան այն դրույթից, որ հասարակական-քաղաքական գործունեության տլորտից դուրս չկա և չի կարող լինել մասսաների իսկական քաղաքական դաստիարակություն, որ անհրաժեշտ է մշտական սերտ կապ պահպանել գաղափարական-դաստիարակչական աշխատանքի և մարդկանց անմիջական հեղափոխական վերափոխիչ գործունեության միջև։ Մարդկանց ակտիվության, ստեղծագործության ու

նախաձեռնության բարձրացումը կուսակցական աշխատանքի կարևորագույն խնդիր է, քանի որ մեր երկրի սոցիալ-տնտեսական, քաղաքական ու կուլտուրական զարգացման պլանների իրականացման հաջողությունը վերջին հաշվով պայմանավորված է բանվոր դասակարգի, կոլտնտեսային գյուղացիության ու մտավորականության, մեր ամբողջ բազմազգ ժողովրդի ակտիվությամբ։

Սովետական մարդկանց նյութական ու հոգևոր կյանքի ոլորտում տեղի ունեցած զգալի տեղաշարժերի, նրանց քաղաքական գիտակցության ու ընդհանուր կուլտուրայի աճի հետևանքով փոխվեցին նաև նրանց ակտիվության դրսևորման ձևերն ու ոլորտը։ Այդ տեղաշարժերը նոր ձևով են դնում դաստիարակության օբյեկտի ու սուբյեկտի հարաբերության ու փոխներգործության պրոբլեմը, քանի որ այսօրվա սովետական մարդը ոչ թե սոսկ ինչ-որ գաղափարների, գիտելիքների որևէ գումարի պասսիվ սպառող է, այլ նաև դաստիարակչական ֆունկցիաների կրող, հասարակական կյանքի նոր ձևերի կերտող, մեր կյանքում տեղի ունեցող բոլոր հեղափոխական վերափոխիչ ու ստեղծագործական գործողությունների ակտիվ մասնակից։ Սովետական հասարակության քաղաքական կազմակերպության կառուցվածքն ու բնույթը յուրաքանչյուր մարդու համար փաստական հնարավորություններ են ստեղծում գտնելու իր հետաքրքրություններին, ունակություններին ու հմտություններին համեմատ իր ուժերի, կենսական ձգտումների, ստեղծագործական էներգիայի ներդրման ոլորտ։ Համագումարում բարձր գնահատվեց աշխատավորների դեպուտատների սովետների՝ որպես ժողովրդական իշխանության ամենալիազոր և դեմոկրատորեն կազմակերպված օրգանների գործունեությունը։

Սոցիալիստական կարգերին բնորոշ է այն, որ աշխատավոր մարդու՝ երկրի կառավարմանը ակտիվ մասնակցելու ֆունկցիան կարող է իրականացվել ոչ միայն պետական օրգանների, այլ նաև հասարակական կազմակերպությունների, ստեղծագործական միությունների ու տարբեր ինքնագործ միավորումների լայն ցանցի միջոցով։ Ավելի քան 100 միլիոն քաղաքացիներ են ընդգրկված արհմիություններում, իսկ առանց նրանց մասնակցության երկրում չի լուծվում աշխատավորներին վերաբերող ոչ մի կենսական հարց։ XXV համագումարում նշվեց, որ սովետական դեմոկրատիայի ավելի ու ավելի կարևոր օղակ են դառնում ժողովրդական վերահսկողության մարմինները, որոնցում ակտիվորեն աշխատում են մոտավորապես 9 միլիոն սովետական մարդիկ՝ բանվորներ, կոլտնտեսականներ, ծառայողներ։ Նրանք նպաստում են պետական պլանների ճշգրիտ կատարմանը, ժողովրդական միջոցների ճիշտ ծախսմանը, պայքարում են բյուրոկրատների ու ընչաքաղցների դեմ, անհոգության ու քաշքշուկների դեմ։ Այսպիսով, մեր օրերում իրողություն է դառնում երկրի կառավարման մեջ աշխատավորների համընդհանուր ներգրավման մասին Վ. Ի. Լենինի կանխատեսումը։

ՍՄԿԿ XXV համագումարը գաղափարական դաստիարակության խնդիրների նկատմամբ կոմպլեքսային մոտեցում ցուցաբերեց։ Համագումարը բազմակողմանիորեն փուսաբանեց կոմունիստական դաստիարակության ուղղություններին, միջոցներին ու մեթոդներին վերաբերող հարցերի ամբողջ համակարգը, ինչպես նաև կոնկրետ ուղիներ ու միջոցառումներ նշեց կոմունիստական շինարարության այդ կարևոր բնագավառում դեռևս արտահայտվող

թերություններն ու բացերը վերացնելու համար։ Կոմունիստական դաստիարակության հիանալի դպրոց էր հենց ինքը՝ սովետական կոմունիստների այդ մեծ համաժողովը, նրա ողջ աշխատանքի լենինյան ոճն ու գործարար մթնոլորտը, այնտեղ ընդունած պատմական որոշումների վեհությունն ու գիտական հիմնավորվածությունը։

Համագումարին կուսակցության Կենտկոմի տված հաշվետվության մեջ ընդգծվում է, որ առաջիկա ժամանակաշրջանում ամբողջ գաղափարական աշխատանքի կենտրոնական խնդիրը պետք է լինի կուսակցության XXV համագումարի որոշումների խորը ուսումնասիրությունը. «Համագումարի գաղափարները հասցնել յուրաքանչյուր կոմունիստի, յուրաքանչյուր սովետական մարդու՝ այս է ոչ միայն պրոպագանդիստների, դասախոսների, զեկուցողների, այլև մեր բոլոր կուսակցական ակտիվիստների պատվավոր պարտքը,—նշվում է ՍՄԿԿ Կենտկոմի հաշվետվության մեջ,—այդ աշխատանքի մեջ հարկավոր է ներդնել բոլոր գիտելիքները, համոզելու ամբողջ կարողությունը, հոգու ամբողջ ուժը։ Այս ամենը համագումարի որոշումների անշեղ կենսագործման նախադրյալներից մեկն է»[5]։ Համագումարի առաջադրած այդ խնդիրը երկարատև ժամանակաշրջանի գործունեության ծրագիր է, այն ի նկատի ունի բնակչության բոլոր խավերն ընդգրկող կազմակերպական, գաղափարական-քաղաքական և կուլտուր-դաստիարակչական բնույթի միջոցառումների լայն համակարգ։

Այդ գործունեությունը կոչված է նպաստելու նոր հնգամյակի վիթխարի խնդիրները կատարելու համար սովետական մարդկանց քաղաքական ու աշխատանքային ակտիվության նոր վերելքին, նրանց մոտ մարքսիստական-լենինյան աշխարհայացքի ու բարձր գաղափարական-քաղաքական հատկությունների ձևավորմանը, գիտակցականության ու կարգապահության բարձրացմանը, ՍՍՀՄ բոլոր ժողովուրդների բարեկամության ու եղբայրության հետագա ամրապնդմանը։

---

5 Նույն տեղում։